

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 26

1898 ՕԳՈՍՏՈՍ 29

Ամեն տողի համար Տարեկան կանխիկ **50** դահեկան, վեցամսեայ **26** իսկ եռամսեայ, **13** դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ: Թղթատարի ծախքը համագրութեան կը վերաբերի: Հասք **40** փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրուցի տեղ **105** դրուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Ազգ. Հիւանդանոց եւ Նորընտիր Հոգաբարձութիւնը.

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ — Երկրագործութիւն Տեսական եւ Գործնական.

Ղ. ԲՈԼԱՏ — Թէյի Մշակութիւնը եւ Պատրաստութեան Եղանակները.

ՄԱՔՍԻՄ — Յուշատետր Առողջապահական — Բժշկական. Գլխու ցաւ եւ Աղէտնդութ.

Ղ. ԲՈԼԱՏ — Պարտիզականական Կենդանաբանութիւն.

ԱՐԱՔՍ — Առտնին Տնտեսականք.

ԽՆԴԻՐՆԵՐ, Բառարան Միամտօրէն բացատրուած, Թղթակցութիւնք, Հանելուկ, Ազգ.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. ՊՂԻՍ, Պապ. Ալի Ճատտէի, Թիւ 4

ԶԲՕՍԱՆՔ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԹԻՒ 17

Ամբողջիս թէոր պատահիս,
Մերթ կը խնդաւ մերթ կը տրտմիս
Իսկ եթէ վանկերս զատես,
Եւ վերջին վանկս որ առնես,
Ոտքս ալ հանես նետես,
Զգուշացիր չի խածնեմ քեզ,
Զարածնի միջատ մ'եմ ես.
Եթէ կամիս դու շուտ լուծես,
Ահա՛ւասիկ զիս կը տեսնես:

Պ. ԳՈՒՅՈՒՄՅԱՆ

ՆՈՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ



Կտեցի՞ր յոյսդ բժիշկէն, դիմէ՛ Բա-
հանային կ'ըսէ առածը Հային:

Մայր-եկեղեցւոյ փողոցը քահանային
դիմելէ առաջ բժիշկ մը կայ, Տօթ. Ս.
Թէրզեան որ ամեն տեսակ հիւանդու-
թիւնները կը դարմանէ և դժուար կը
ղրկէ իրեն դիմողները քահանային.
ճարտար է արուեստի մէջ և երկար տա-
րիներ գաւառները իր արուեստը զօրծ
դրած է օգտակար կերպով:

ՍՊԱՌԵՑԱԻ, ԳԻՆԸ ՍՈՒՂՑԱԻ, 20 ՂՐՇ.
է հիմա խօսքերը ջուրը ինկաւ, որով-
հետեւ՝

ՏՕՆԱԿԱՐԳԸ

հրատարակուեցաւ:

Եկեղեցւոյ պաշտօնեաները, դպի-
րները ու երգչիկ մանուկները աօն օրերը
պիտի չ'նեղուին, ամենուն ալ գոհացում

տուած է, և երգեր ու Շարականներ ալ
աւելցած է, այս տպագրութեան մէջ.
Գինը 12 զրշ. կեդրոնատեղին է Պէր-
պէրեան Տպարանը. կը գտնուի բոլոր
գրավաճառայ քով:

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Կ. Ա. Մ

ՎԱՐԺ ՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐԻ

ԳԻՆ 4 ՂՐՇ.

Ո'րչափ պիտանի, դիւրուսոյց, ա'յնքան
անծանօթ մնացած գիրք մ'է:

Դրութիւնն է Անգլիական. հետեւողը
Գ. Եպիսկոպոս Ալվազովսքի. հրատարակողն
է, Վահրամ Թ. Մարգարեան:

Բայց կ'երեւի թէ՛ Մայր լեզուն է միայն
որ մեր հին պատուելիները չեն ուզեր աւան-
դել նոր դրութեամբ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մեր խորին շնորհակալութիւնք կը
լայսենեմք «ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-ին, որոյ մի-
ջոցաւ ունեցանք սա օգուտք, ո'չ օ-
լորտներ:

Ա. Դիւրութիւն եւ մաքրութիւն
ամպարները պատրասեցաւ:

Բ. Քարիւղի նուազ սպառում եւ
առաւ լոյս ելեֆտահան:

Գին 50 ՓՐՅ. 2 ՂՐՇ. 3 ՂՐՇ.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՅ

Ղ. ՌՈՒԱՏ



Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 26

1898 ՕԳՈՍՏՈՍ 29

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

ԵՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Երկու շարժաթ առաջ Հայ օրաթերթերը գոհունակութեան արտայայտութիւններով աւետեցին ժողովրդին Ազգ. Հիւանդանոցի Նոր Հոգաբարձութեան կազմակերպութիւնը, որու անդամները՝ դիրքով, կացութիւնով և յատկութիւններով ամէն կերպ վստահութիւն կը ներշնչեն հանրութեան:

Նորընտիր Հոգաբարձութիւնն իր Պաշտօնական յայտարարութիւնն ալ ըրաւ արդէն օրաթերթերու մէջ, որով հրաւէր կը կարգայ հասարակութեան, նիւթական նպաստներով աջակցելու իրեն, Ազգային մամուլին՝ բարոյական ձեռնառութիւններով, ինչպէս և գաւառներու Առաջնորդարաններու:

Ազգ. Հիւանդանոցի պիւտճէին կարի անձուկ վիճակն է անշուշտ, որ Հոգաբարձութիւնը կ'ստիպէ. անոր բազմակարօտ և հարկեցուցիչ պէտքերուն հասնելու համար, ժո-

ղովորդի գթասրտութեան դիմել, անոր ինքնայօժար և առատաձեռն նուէրները խնդրելու համար. որ անշուշտ այս պարագային մէջ, ամեն Հայ անհատի համար նուիրական պարտականութիւն մ'է, իր լուծման նըւիրել այդ Գթութեան Տան. ուր հաւաքուած պատասխարուած են ընկերական աշխարհէն կիսով չափ անջատուած անոք անօգնական դողդոջուն ծերունիներ, արգահատանաց արժանի ասուչներ և անկեալներ, որոնք երբեմն մեր մէջ ասլրած, և թերեւս իրենցմէ շատեր մարդկութեան օգտակար ծառայութիւններ մատուցած են. բայց այսօր ակնդէտ՝ մեր առատաձեռնութեան կ'սպասեն վիզերնին ծուած, իրենց անհամբոյր կեանքի միացորդը լրացնելու համար: Հապա սա փոքրիկ որդուկները, որոնք ընտանեկան կեանքէն վտարուած, և այդ գթութեան յարկին տակ պատասխարուած՝ ամէն կերպով մեր ձեռնառութեան արժանի չ'են:

Սակայն այդ հաստատութեան պէտքերն այնքան շատ և յարաճուն են որ, եթէ նորընտիր Հոգաբարձութիւնը ըստ հնաւանդ դը-

րութեան, առանց հասցիքի նորանոր և մըլտատե աղբիւրներ ստեղծելու, իր յոյսը միմիայն նուէրներու անկանոն և անկայուն հասցիքներու վրայ դնէ, նոյն անպատեհութիւններն, մատակարարութեան նոյն անկանոնութիւններն պիտի չարունակուին, և հիմնապէս ոչինչ բարեփոխուած պիտի ըլլայ հոն:

Այսպիսի հաստատութիւններու պիւտճէն պէտք է ըստ կարելոյն հաստատուն եկամուտներու վրայ կազմակերպուած ըլլայ. և ինքնայոժար նուիրատուութիւններէ գոյացած հասցիքն ալ գործածել անակնկալ և չի նախատեսնուած պէտքերու. որպէս զի վարչական գործառնութիւնները կանոնաւոր ընթացք մ'ունենան: Եւ այս չէ՞ արդէն գլխաւոր պատճառը, որ Ալզ, Հիւանդանոցի մատակարարութիւնը շարունակ դժուարութիւններու բաշխուած է: Իր ունեցած հաստատուն եկամուտները չնչին գումար մը կը կազմեն բազմաչափ ծախքերու հանդէպ, որոց կարեւոր մասը դոյնելու համար, սարսափելի է ամէն ժամ ժողովուրդի նուիրատուութեան դիմել: Այս նուիրական պարտաճանաչութիւնը գովելով հանդերձ, մենք այնպէս կը կարծենք թէ, հաստատութեան նկատմամբ սխալ է այս դրութիւնը, որ տեղի ստեղծ է ամէն աստիճան ինչպէս ժամանակէ մ'ի վեր՝ աչքերնուս առջև՝ հոն անցած դարձած անհաճոյ դէպքերուն պէս շատերու:

Նորանոր հասցիքի աղբիւրներ ստեղծելու դրութեան, նախորդ Հոգաբարձութիւնը արդէն համոզուած ըլլալով, սկզբնապէս ընդունուած, և մասամբ ալ այդ գաղափարը իրականացուցած էր: Յանուն Ալզ. Հիւանդանոցի ծախսուած սիկարի թուղթը, ինչպէս ամէնքս ալ գիտենք բուսական կոկիկ հասցիք մը կր բերէ այդ հաստատութեան. և եթէ քիչ մը օտարամոլութիւնը մէկ կողմ ձգելով և քիչ մ'ալ իբր մարդասիրական պարտականութիւն սեպելով այդ թուղթը գործածել ուզենք, տարակոյս չ'կայ որ՝ այդ հասցիքը կրնայ, կ'անպատկուելի, որով և անուղղակի կերպով, այդ հաստատութեան ալ օգնած պիտի ըլլանք: Ինչու չ'ենք ըներ: Ահաւասիկ խնդիրը: Որովհետեւ սա տղեղ գաղափարը ունինք ու, այդ թուղթի մենաշնորհը առնող անձը պիտի հարստանայ. սակայն այդ պար-

ազային չ'ենք ուզեր յիշել թէ. օտարի մը թուղթը գործածած ատեննիս, նոյն իսկ այդ օտարը հարստացնելու ծառայած պիտի ըլլանք. առանց հիւանդանոցի սնտուկը կուտ մը մանելու: Այսպէս է նաեւ յանուն Հիւանդանոցի ծախսուած դերձաններն (մաքարաթիւրէսի) ալ. որոնք դժբաղդաբար չ'կրցան հրապարակին վրայ արժանաւոր տեղ մը գրաւել, և մեր ընտանեկան շրջանակներու մէջ ընդհանրանալ:

Խնդիրը եթէ քիչ մը անաչառութեամբ և լրջօրէն քննել ուզենք. ամէն չարամիտ և շահագիտական նկատողութիւններ մէկ կողմ ձգելով, և միեւնոյն ատեն ալ եթէ յիշել ուզենք թէ, այդ թուղթը և դերձանը գործածած ատեննիս, Ալզ. Հիւանդանոցի մէջ պատասխարուած 1000ի չափ դժբաղդ կարօտեալներու նպաստած պիտի ըլլանք. պիտի տեսնենք թէ, մենք անիրաւ ենք այն մարդուն դէմ, որ նախաձեռնարկ եղած է այնպիսի միջոցի մը, որու շնորհիւ քիչ թէ շատ Ալզ. Հիւանդանոցը կը նպաստաւորի: Կու համոզուինք որ, ամէն ձեռնարկ իւր սկզբնաւորութեան մէջ շատ դժուարութիւններ, սխալանքներ և ծախսողութիւններ կ'ունենայ. բայց այս ամէնը հետզհետէ կրնան կանոնաւորիլ, ուղղուիլ և հարթուիլ, երբ փոխադարձաբար իրաւախոհութիւն և բարիկամեցողութիւն ըլլայ: Բնասի երբ կը տեսնենք թէ մասնատարապէս այս օրինակ սպարադաներու մէջ, ձեռնարկութեան նախատիւը բարի է և օգտակար միանգամայն, բայց գործադրութեան եղանակները լաւ որոշած չ'են, բարեփոխութիւնը կարելի եղող սխալները մատնանիլ ընելով հանդերձ, պաշտպանենք դրութիւնը, աւելի օգտաւէտ միջոցներ ցոյց տալով: Այսօր թերեւս շատեր, Հիւանդանոցին աւելի շահաւէտ պայմաններ առաջարկելով. ուզեն այդ մենաշնորհը իւրացնել: Բայց միթէ այս պարագային մէջ հնարողը իրաւունք մը չ'ունի՞ իր ցանած սերմին պտուղը վայելելու: Ինչո՞ւ կ'առավարութիւնները մենաշնորհ կուտան հնարիչներու, որոնք՝ իրենց աշխատութեան արդիւնքը իսկական արժանիքէն կրկնապատիկ կամ եռապատիկ աւելի գնով ծախած ատեննին, ժողովուրդը բողբոջելու իրաւունք չ'ունենար:

Այս տողերը գրած ատեննիս սակայն, նը-

սրտով չ'ունինք այս կամ այն անձին ապ-
րանքները պաշտպանելու, և կամ քաջալեր
կարգալ թուղթի և դերձանի արտոնատիրոջ,
որպէս զի՝ իր ձեռքը դրանուած միջոցը չա-
րաչար գործածելով, պարտաւորեցնէ ժողո-
վորդը, դէշ ապրանք գործածելու. ո՛չ.
աւելի մատնանիլ ընել կ'ուզենք սա կէտը թէ՛
նուիրատուութենէ՝ աւելի հաստատ հիման
մը վրայ կանգնուած է այս գրութիւնը. և
ժողովուրդը պէտք է նկատողութեան առնէ
թէ՛, հոս՝ ճրի նուիրատուութիւն մը չ'է կա-
տարուածը. այլ իրեն ամենօրեայ որեւէ գոր-
ծածած առարկան, փոխանակ ուրիշէ գնե-
լու, այդ հաստատութեան անուան նուիր-
ուած տեսակէն պիտի գնէ. պարզ խօսելով,
ապրանք պիտի առնէ ու փոխարէն դրամ
պիտի վճարէ, միւսնոյն անգամ ալ, բարե-
գործական պարտք մը կատարած ըլլալու հա-
ճոյքը պիտի ունենայ:

Ինչո՞ւ ուրեմն փոխանակ սխալը ուղղելու
չ'ենք հիմնովին տապալել ջանանք: Միթէ
պայմաններն բարեփոխել կարելի չ'է՞, երբ
երկու կողմէ համոզում գոյանայ: Եթէ սիկա-
ռի թուղթերը աղէկ տեսակէ չ'են, դժուար է
միթէ գտնոնք աղնուայնել, և իրենց արժա-
նիքին համեմատ ալ դին պահանջել. և կամ
ինչո՞ւ համար չ'իսնդրուի ուրիշ աւելի ընտիր
և աղնիւ մէկ կամ երկու տեսակներու ալ
հրապարակ հանուիլը. որպէս զի ժողովուրդը
առ հասարակ այդ թուղթէն գործածելովը
Աղգ. Հիւանդանոցը աւելի օգտուի:

Միւս կողմէն ալ, արտոնատէրը երբ քա-
ջալերութիւն գտնայ ժողովուրդէն, տարա-
կոյս չ'կայ որ, գէթ իր շահը նկատողութեան
ստնելով, պիտի ջանայ հետզհետէ ժողովուր-
դին պահանջմանց համաձայն աւելի աղէկ և
աժան ապրանքներ հրապարակ հանել: Որով-
հետեւ պարզ խանութպան մ'անգամ գիտէ
թէ՛ ապրանք մը որչափ աժան տրուի բաղ-
դատումը իր տեսակներուն, սպառումը այն-
չափ շատ կ'ըլլայ. և հետեւաբար ալ հասոյ-
թը գգալի կերպով աւելի: Ի՞նչ է ուրեմն
պատճառը որ Հիւանդանոցի դերձանները
Այժմանիչ դերձաններուն չափ աժան չ'կրնար
տրուիլ, որպէս զի՝ թէ՛ այս վերջինին և թէ՛
հրապարակի միւս տեսակներուն հետ մրցելով
սպառումը շատնայ հետզհետէ: Այս կէտն է
որ ահա լուսաբանելու է: Կամ այն է որ տե-

սակը աղէկ է, և աւելի աժան չ'աղատեր, և
կամ արտոնատէրը չ'ահամոլ դիտումներով ա-
ւելի դին դրած է քան իւր արժէքը: Այս
երկու պարագային մէջ ալ, արտոնատէրը
պէտք է խորհի պարտու պատշաճն անօրինե-
լու համար. իսկ եթէ Հոգաբարձութիւնն է
որ աւելի շահ մը կը պահանջէ յանուն Հիւան-
դանոցի, թերեւս մինչև աստիճան մը ներելի
ըլլայ, թայց ոչ արդարացի և ոչ ալ գործնա-
կան. որովհետեւ՝ այն ատեն սպառումը նուազ
ըլլալով, իր սպասած հասոյթին կէսն անգամ
չ'պիտի գտնէ: Իսկ թէ տարածոյնուած չա-
րամիտ դիտումներու հետեւանօք ժողովուրդն
է որ կը թերանայ իր պարտականութեան
հանդէպ, մտածելու է թէ՛ ամէն պարագայի
մէջ տուժողը միշտ ինք պիտի ըլլայ բարոյա-
պէս թէ՛ նիւթապէս. որովհետեւ՝ երբ այս մի-
ջոցներով Հոգաբարձութիւնը չի յաջողի մին-
չև աստիճան մը որոշ հասոյթներ յատկացնել
Հիւանդանոցի մատակարարութեան համար,
պիտի պարտաւորի այն ատեն նուիրախնդ-
րութեան ձախող դրութեան դիմել:

Մէկ նպատակ միայն ունինք ամենքս ալ.
հանդէպ այս հաստատութեան: Բարուք վի-
ճակի մը մէջ տեսնել զայն նիւթապէս՝ թէ
բարոյապէս: Բայց դժբաղդաբար ամեն ջանք
և ճիգ ի դերեւ ելած են ամեն անգամ, և
մենք ամենքս ալ յուսախար եղած ենք. և
ամեն անգամ ալ այս անպատեհութիւնները
և անյաջողութիւնները վերագրած ենք հո-
գաբարձութեանց անյարմարութեան ևն. ա-
ռանց սակայն խնդիրը չ'ըջահայեցութեամբ
քննելով, բուն շարժառիթը երևան հանելու:

Դրամն է որ կը պակսի անշուշտ: Ասիկայ
ամենքս ալ լաւ հասկցած ենք. բայց թէ ինչ-
պէս՝ այդ դրամը ձեռք բերելու է և թէ
ինչպէս՝ գործածելու է, ատիկա է որ լաւ
չ'ենք հասկցած, և հոն է որ միշտ կը սխա-
լինք: Մէկ դիւրին միջոց միայն գտած ենք:
Ժողովուրդի բարեսրտութեան միայն դիմել,
ինչպէս ըսինք, որովհետեւ՝ սկզբունքով, այս-
պիսի բարեհաւատակ հաստատութեանց հա-
մար, հանրութեան աջակցութիւնը անհրա-
ժեշտ պէտք մ'ըլլալը ենթադրելով, բոլոր
յոյսերնիս այդ միջոցին վրայ կը դնենք: Սա-
կայն ինչպէս ըսինք, երբ նուիրատուութիւնը
սովորութիւն մը կը դառնայ, և հաստատու-
թեան պիւտքէն անօր վրայ կը հիմնուի, իր

չարունակութեան մէջ այլևս սպասուած արդիւնքը արտադրելէ շատ հեռի կը մնայ, և հետզհետէ անդի կուտայ կարգ մը անտխորժ անպատեհութեանց, դժուարութիւններու, և հետեւաբար ալ ձանձրառիթ գանգատներու և յհատութեան:

Ուրիշ միջոց ուրեմն. աւելի հիմնական, աւելի գործնական եղանակներու դիմենք:

Նորընտիր Պատ. Հոգաբարձութիւնը իր պաշտօնական յայտարարութիւնով, հասցնելի նոր աղբիւրներ ստեղծելու մտադրութիւնը կը յայտնէ. անշուշտ այս առթիւ ներկայացուած ամեն օգտակար կարծիք հաճութեամբ կ'ընդունուի:

Նպատակս օգտակար առաջարկութեան մը շուրջը կը դառնայ, ուրկէ կը յուսամ, Պատ. Հոգաբարձութիւնը պիտի շահագործուի, երբ վայն լրջօրէն նկատողութեան առնել հաճի:

Ասկէ մէկուկէս տարիի չափ առաջ, նախորդ Հոգաբարձութեան օրով ծրագիր մը ներկայած եմ, որու գործադրութիւնը ուղղակի ներկայ Հոգաբարձութեան նպատակը կը շօշափէ հասցնելի տուտ աղբիւր մը բանալով Հիւանդանոցի առջև: Երկու բառով բացատրեմ:

Առաջարկած եմ, Ս. Յակոբայ որբանոցին կից բաւարար մը, հաւնոց մը, բանջարեղինաց պարտէզ կեն. հաստատել, և անոնց արտադրութիւնը ծախել ժողովուրդին: Շատ պարզ է առաջարկութիւնս, գործադրութիւնը դիւրին և յաջողութիւնը հաստատութեան անունով երաշխաւորուած:

Որբանոցին աշակերտներուն մէջ դաւաճացիներ ալ կան. ուստի՝ երկրագործութեանէն, և իրեն յարակից ճարտարարուեստներէն և արհեստներէն աւելի օգտակար և նպատակին ծառայող ուրիշ ինչ կրնանք սովորեցնել անոնց: Եւ այս կերպով անոնք թէ իրենց դասերուն պիտի հետեւին հոն, և թէ գործնականապէս աշխատելով, իրենց ճակտի քրտինքով պիտի կրնան շահիլ թէ իրենց անդեան, կրթութեան և դաստիարակութեան փոխարժէքը, և թէ միևնոյն անգամ ալ, զուտ հասցնելի կարեւոր մաս մը պիտի կրնան թողուլ հաստատութեան:

Դրամագլխի հայթայթման մասին, ծրագիրներուն մէջ երկարօրէն խօսած եմ, և

ի պահանջել հարկին ալ, պատրաստ եմ պէտք եղած բացատրութիւնները տալ Պատ. Հոգաբարձութեան:

—>←

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Պ.

ԻՆՉ Է ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն ԴԵՒԵՒՅԵՒՆ 25).

«Այն ցանուածը չէ որ կ'արտադրէ, այլ խնամուածը».

ՏԸԼԻՒ

Մարդ մը ռուէ արհեստ մը ձեռնարկելու համար, պէտք է որ լաւ ճանչնայ նախ և առաջ այդ արհեստին նպատակը. օր. համար մէկը որ երկրագործութեամբ կ'ուզէ զբաղիլ նախ պէտք է դիտնայ թէ ի՞նչ է երկրագործութիւնը:

Շատ մը հողագէտներ երկրագործութիւնը սահմանելու համար քանի մը տեսութիւններ տուած են. պիտի ջանանք համառօտակի ունարկ մը նետել մի քանի կարեւոր սահմաններուն վրայ՝ ցուցնելով անոնց թերութիւնները կամ առաւելութիւնները, յետոյ երկու խօսքով պիտի բացատրենք թէ ի՞նչպէս պէտք է ըմբռնել երկրագործութիւնը:

Յռանաացի հողագէտ Կասարէն կոմսը իր երկրագործական երկին մէջ կ'ըսէ.

«Երկրագործութիւնը այն գիտութիւնն է որ կը միտնէ միջոցներ ամենախնայողաբար ամենակատարեալ բոյսեր ընդունելու համար».

Այս տեսութիւնը սխալ է, որովհետեւ երկրագործութիւնը միմիայն գիտութիւն մը նկատելու չէ, պէտք է գտնել հողագէտը՝ որ իւր աշխատանոցին մէջ նստած փորձեր կ'ընէ առանց զբաղելու ստակի խնդրով՝ գործաւոր հողագործէն՝ որ միայն մէկ գաղափար ունի, այն է որ բերքերէն ամէնէն մեծ շահ

մը ընել: Ուրեմն տարբերութիւն մը գնելու ենք Գործնական և Գիտական երկրագործութեանց մէջ:

Գիտական երկրագործութիւնը՝ հողագէտը — ինչպէս կը կոչեն — իր սենեակին մէջ նստած փորձեր կ'ընէ ցուցնելու համար այս կամ այն բոյսին առաւելութիւնները կամ թերութիւնները: Գործնական երկրագործն ալ կը շարժի հողագէտին փորձերուն համեմատ. ուրեմն այս տարբերութիւնը գործնականին և տեսականին տարբերութիւնն է:

Յիւլիէ Ֆառնսացի անուանի բնագէտը երկրագործութիւնը սահմանելու համար կ'ըսէ.

«Երկրագործութիւնն է սրբաւոր պզտիկ տարածութեան մը վրայ ամէնէն շատ հասցի բերելու արուեստը»:

Այս տեսութիւնն ալ սխալ է. բնաւ խնայողութեան վրայ չ'իտասուիր և շատ գէշ բան մը ըրած պիտի ըլլար եթէ երկրագործը ջանար պզտիկ տարածութեան մը վրայ ամէնէն մեծ քանակութեամբ բերք յառաջ բերել առանց կարեւորութիւն տալու բերքին աղւնութեան և տեսակին:

Պառալ կ'ըսէ.

«Երկրագործութիւնը կը գոյանայ հողէն ամէնախնայողաբար և կարելի եղածին չափ լաւ և օգտակար բոյսերու մեծ քանակութեամբ ընդունելուն մէջ»:

Այս տեսութիւնը բաւական լաւ է, սակայն չ'իջ մը կնճառու: Ահա ինչ որ պէտք է հասկնանք երկրագործութեամբ.

«Երկրագործութիւնն է շատ մը միջոցներու (procédés) գործածութիւնը, որք կը ներեն հողը մշակել այնպէս որ կարելի ըլլայ յառաջ բերել լաւ և օգտակար բոյսեր ամէնէն քիչ ծախքով»:

Ուրեմն երկրագործը պիտի ջանայ որ իւր աշտողջած բոյսերը լաւ և օգտակար ըլլան և դիմելու է այն տեսակ միջոցներու որոնք պիտի ներեն քիչ ծախքով յառաջ բերել այդ բերքերը. օր. համար երկրագործական կատարելագործեալ գործիքներու գործածութիւնը ոչ միայն գործը կը դիւրացնեն ու ժամանակի ինայտողութիւն մը յառաջ կը բերեն, այլ նաև մշակութեան ծախքերը գրեթէ կէս առ կէս կը նուազեցնեն:

Ռատուժօ

Մ. Կ. ՄԱՆԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ԹԷՅԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ե՛՛՛ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

(Շարունակելի — ԲԷ — 25)

Սէյլանի և Սուսամի մէջ Անգղիացիք ընդարձակ մշակութիւններ կ'ընեն թէյի, և իրենց արտադրութիւնը կը գերազանցէ Չինացիներու պատրաստած տեսակները: Մասնաւորապէս Աննամի շրջակայները (Հնդկաստան), ուր առաջին անգամ տնկարկութիւնները անյաղող կերթային, բայց լուրջ ուսումնասիրութիւններով, հողերու ընտրութեան մասին իրենց լուրջ ուշադրութիւնները կրկնապատկեցին, մշակութեան եղանակները փոխեցին, պատրաստութեան կերպերը բարեփոխեցին, և այսօր Սէյլանի և Աննամի թէյերը հրապարակի վրայ առաջնակարգ տեղերը գրաւելով, տարեկան 3,000,000 ոսկիի մօտ արտածութիւն մը ունին, որով՝ Անգղիոյ կառավարութիւնը այլևս Չինացոց արտադրութեան չ'պէտքն չ'զգալով, թէյի հարկն վճարելէ ազատած է:

Մալեզեան կղզիներու մէջն, մասնաւորապէս Ճավայի արտադրութիւնները գնահատելի են հրապարակներու վրայ. և արդէն այս կղզին հռչակաւոր է սուրճի, և այլևայլ համեմնեղու առատ արտադրութիւններով:

Ֆառնսացիք 1840ին փորձած են Ֆինիլիթերի մէջ թէյի մշակութիւնը, բայց յաջողութիւն չ'ի գտնալուն, չեն շարունակած:

Թէյի երգիւնները. — 1. Հանքային նիւթեր կը խառնեն, ծաւալը կամ ծանրութիւնը աւելցնելու համար: — 2. Բուսային նիւթեր կը խառնեն, որոնք համեմատաբար շատ քիչ արժէք ունին, կամ բնաւ չ'ունին: — 3. Փիմիական նիւթեր կը խառնեն, արուեստականորէն իր ուժը շատցնելու համար: — 4. Գունատու նիւթեր, գոյնը զօրացունելու համար:

Ա. Թէյը բնականէն իր բաղադրութեան մէջ կը պարունակէ փոքր քանակութեամբ ֆոսֆորի երկաթ (phosphate de fer). Բայց այս համեմատութիւնը 100ին 3էն աւելի չէ մոխրին մէջ, (առանց լուսածիլի միայն երկաթ

հաշուելով) . և թէ յի ամբողջութեան մէջ ալ (այսինքն տերեւին մէջ) հարիւրին 0,16 կը գտնուի : Արդ՝ թէյերը խարդախելու համար պարզ երկաթի փոշի կը խառնեն , որ խփոյն երևան կուգայ այս խարդախութիւնը , թէյը սովորական մագնիսի (հէլէւ) աղբեցութեան ենթարկելով . որովհետեւ , լուսածնային երկաթը մագնիսէն չաղբուի , մինչդեռ միւսն՝ մագնիսը իրէն քաշելով , խարդախութիւնը խփոյն յայտնի կըլլայ : Ընդհանրապէս 100ին 7-8 երկաթի խարտուկ կը խառնեն և մասնաւորապէս 4-5 կոշտած թէյի անսակներու մէջ , զոր կը պատրաստեն թէյի փոշիները խէժի կամ նաշիհի (չէ կամ չէ) լուծուած քով խառնելով , և մանր գնտակիկներու վերածելով : Մինչև իսկ այս անսակներուն մէջ գրչաքար (graphite , չէլ-չէլ) ալ կը խառնեն , որ գնտակիկներուն փայլուն երևոյթ մը կուտայ :

Թէյերու ծանրութիւնը աւելցնելու համար կը խառնեն նաեւ աւաղ : Անարատ թէյը 100ին 5,24ին 6 մոտիւր կուտայ եթէ այրենք : Ուստի՝ եթէ կասկածինք որ մէջը հողային նիւթեր խառնուած են , որոշեալ չափով թէյ կըռելու է խնջուչոյ այս պարագային մէջ , քիմիագործներու կամ գեղագործներու ճշգրտացոյց կշիռներէն գործածելու է , յետոյ քիմիագործներու յախճապակիէ սկահակներու մէջ այրելով , մնացած փոշին կըռելու է :

Բ . Այս անսակ խարդախութիւնը կը կատարեն հետեւեալ նիւթերով :

Գործածուած թէյի տերեւներով , ինչպէս և վայրի սալորենիի , հացիի (սէլ-սէլ) , թանթրուենիի (սէլ-սէլ) , ուռիի (սէլ-սէլ) , դափնիի , երակի , վարդենիի , բարտիի (սէլ-սէլ) մանիշակի ևն . ևն . տերեւներով :

Այս կարգի խարդախութիւնները գուտ քիմիական գործողութիւններով կը հասկըցուին :

Գ . Այս պարագային թէյերը կը խարդախեն այնպիսի նիւթերով , որոնք իրենց բաղադրութեան մէջ կը պարունակեն տրապաղ . զորօրինակ Կոշտած նիւթը : Նոյնպէս կը խառնեն երկաթի դիւրահալ աղեր , և բնածխային քարայրներ :

Դ . Թէյերու գոյնը զօրացնելու համար , բուսային ներկերէ զատ , որոնք մինչև աստի-

ճան մը անվնաս կրնան նկատուիլ , կը գործածեն նաեւ խայծղանէ (սէլ-սէլ) ամանցում տերեւեր (սէլ-սէլ) , որոնք վնասակար գոյեղներ կը պարունակեն իրենց մէջ :

Բայց բոլոր այս խարդախութիւնները ճանչնալու համար քիմիագէտ ըլլալու է , և մասնաւոր ուսումնասիրութիւններ պէտք է , ինչ որ ժողովուրդի կարողութիւնէն շատ վեր է . ուստի՝ կրկին կըսեմք թէ . ամենէն պիտի միջոցը և խոհմտութիւնը , պարկեշտ և ուղղափառ վաճառատուններու դիմելու է չի խարուելու համար :

Ղ . FALUS

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ-ԲԺՇԿԱԿԱՆ

ԳԼԽՈՒՅԱԿ ԵՒ ԱՂԵՊՆԴՈՒԹԻՒՆ

Է՛հ , գլուխդ կը ցաւի , անտանելի անհանգստութիւն . ոչ կրնաս նստիլ , ոչ կրնաս քալել , խօսիլ կուզես , նշգրակի հարուած մ'է որ գանկիդ կ'իջնայ : Կարծես թէ կապարեայ ահագին ծանրութիւն մը գլուխդ կը ճնշէ այդ միջոցին . չես կրնար ոյս կամ այն կողմը շարժիլ . հրաբորբոք վառարանի մը պէս կ'այրի անիկա : Աւելի շողեշարժ մեքենայի կաթսային կը նմանի անիկա , որ հետզհետէ արտադրուած շոգիի աղբեցութեան տակ արտածայր ճգաւումի մը մէջ կը գանուի : Այլ չես գիմնար , վայրկեան մ'իս՝ գլուխդ պիտի պայթի . աչքերդ սուռած , իրենց կաղիմներուն մէջէն դուրս կ'ընալ կը փորձեն . բայց անկարելի բան , չես կրնար մինչև իսկ աչքերդ բանալ , մասնաւոր որ պայծառ լուծին նայած ատենդ՝ յանկարծական խօստուկներ կ'ըզգաս աչքերէդ դէպ ի ներս : Մասային կարողութիւնդ ընդարմացած , չես ուզեր և չես կրնար իսկ ոչինչի վրայ մտա-

ծել. սիրտդ նեղ, ամէնքան աչքիդ անհանդիման կերելի. պառկիլ կը փորձես, և չես կրնար. թնչ ընել, թնչ անտանելի վիճակ:

Այս անհանգստութիւնը յառաջ կուգայ երբեմն բոլորովին անծանօթ սխառնանքէ, կամ գլուխը կազմակերպող էական տարրերէ միայն անկարգութենէն (ոսկր, շիղ, մարմ, ուղեղ, ևն.) իսկ շատ անգամ մարսողութեան յօրինուածնէրէն մէկուն խանգարման հետեւանքն է ան: Ուրիշ անգամներ ալ կարգ մը տենդերու սկզբնաւորութեան ատեն երեւան կուգայ, որ այս անգամ այն հիւսնողութեան որոշիչ սկզբնաւորաւոր կը նկատուի:

Այս օրինակ պարագաներէ զատ գլխաւորութիւնը պատահական կրնայ ըլլալ, որ յառաջ կուգայ հետեւեալ պարագաներու մէջ. ստամոքսը ուտելիքով կամ ըմպելիքով, և մասնաւորապէս սեղանի ըմպելիքներով չափազանց ծանրաբեռնելէն. կամ ծխախոտի չափազանց գործածութենէն. տաք արեւի կամ ցուրտ հովի մը ազդեցութեան տակ երկար ատեն կենալէ. ֆիզիքական կարողութիւնները չարաչար յաջնեցնելէն, կամ երկար ատեն անքուն մնալէ. հոգեկան յաւրամներէ, ևն. ևն: Այս պարագաներու մէջ յառաջ եկած գլխու ցաւերը կանխարգելման շատ անգամ, դաւաթ մը թէյ, սուրճ կամ կաթով խմելով, և մէկ երկու ժամու չափ օգտուեն, զով և մալմ սենեակի մը մէջ պառկելով. որ նոյն միջոցին լաւ կ'ընէր եթէ անձեռոց մը, կամ ու է լաթ մը երկայնութեանը ծալելով, կէսը թրջէր պարզ ջուրով, և միւս չոր մնացած կէսը տակը ծալելով ծածրակնուդ (էնքսէ) վրայ դնէր:

Բայց սովորական դարձած գլխու ցաւը, որ պարբերաբար կը բռնէ, այսինքն՝ օրը անգամ մը այս կամ այն ժամուն. կամ 2-3 օրը անգամ մը, ևն. շատ դժուար է բուժելը, որու պատճառը հետեւեալ պարագաներու մէջ պէտք է

փնտռել: Մարսածեւութիւն (gastralgie), որովայնի սնդութիւն, մտային չարաչար աշխատութիւններ, լեարդի (գարա ճիւղ) կամ երիկամանց (պէօպրէք) անկարգութիւններ. զոր օրինակ, աղիքներու, կուրծքի կամ գլխու հարբուխ, որոց սովորական լեզուով իջուածք կը զուրցեն և կամ վերջապէս շթատապ (goutte, էլ):

Դիսագարութեան այս վերջի տեսակը որ շթատապի հետեւանք կը նկատուի, ամէնէն յաճախ պատահածն է, որ երբէք չի յուսացուիր, շթատապի ուրիշ ակնարկներ չ'տեսնուելուն: Եւ թերեւս ալ, երեսունը անցուցած անձերու պատահած դիսագարութեան տեսակն ալ այս է: Պզտիկ և մեծ տղաքներ՝ շատ անգամ մշտապէս գլխաւորութիւն մը կ'ունենան, որ շարունակ (chronique) երեսոյթ մը կ'առնէ, շատ անգամ տեսողութեան յագեցութեան կը վերագրուի: Այս տեսքը կը պատահի ընդհանրապէս կէս օրէն վերջը, երբ արդէն կարգալէ կամ դրելէ աչքերը պարտաւորած են, որ յանկարծ իրենց գլխուն մէջ պարտապալութեան պէս բան մը կ'զգան նախ, և յետոյ պզտիկ խօստուկներ միշտ աչքէն գէպ ի ներս, որ հետզհետէ շատնալով, երեկոցեան մօտ այլևս անտանելի կը դառնայ: Երբ վերոյիշեալ պատճառներէն մին դոյալութիւն չ'ունին մշտապէս գլխաւորութեան մէջ, պէտք է այն ատեն շարժառիթը փնտռել մարսողական յօրինուածներու մէջ: Այս պարագային պէտք է արդիւիւ, սուրճ, թէյ և ոգելից ըմպելիքներ, կերակուրներու մէջ մոխրանալութիւնը նուազեցնել, դժուարամարս ուտելիքները բոլորովին բաց թողուլ, խմորեղէն պատրաստութիւններ չի կերցնել, թեթեւ մաքրողականներ տալ, որոնք մարսողութիւնը դիւրացնելով, աղիքները միշտ կակուղ կը պահեն: Միտախոտը չափազանցօրէն գործածողները պէտք է ժառկալ ըլլան, և աւելի աղեկ՝ ժամանակ մը բոլորովին ձիւնէ հեռի կենալ:

Երբէք գլխագարութեան համար յան-
ձնարարուած այս կամ այն դեղերը մի
գործածէք առանց խղճամիտ բժիշկի մը
խորհուրդը առնելու . որովհետեւ, այդ
դեղերէն չատերը, թերեւս ձեր գլխու
ցաւը առ երեւոյթս անցնեն, բայց բուն
սկզբնապատճառը թագուն և անբուժելի
մնալով, և հետզհետէ զօրանալով, օր մը
այլևս այդ դեղերը անազդեցիկ կը դառ-
նան, և ձեր գլխացաւն ալ անբուժելի:
Ահա ասոր համար, եթէ վերը յիշ-
ուած պատճառներէն մին չտեսնաք
ախտաժէտ անձին վրայ, պէտք է ան-
պատճառ դիմէք բժիշկի մը, և աւելի
աղէկը, նախ վարպետ ակնաբոյժի մը,
որ ախտաժէտին աչքերը լուրջ քննու-
թեան ենթարկելով, երեւան հանէ թէ
տեսողութեան յօրինուածքին մէջ ու է
խանդարում մը կա՞յ թէ ոչ, և թէ այդ
խանդարումն է գլխագարութեան պատ-
ճառը, եւ:

Ըսինք թէ, աղէպնդութիւնը գլխա-
գարութեան գլխաւոր պատճառներէն
մին է, և միթէ գլխագարութեան չափ
անտանելի անհանգստութիւն մ'ալ աղէ-
պնդութիւնը (գապլլըք) չ'է: Աղիքներու
կանոնաւոր պաշտօնավարութիւնը, ամ-
բողջ մարմնոյն բարեւաւ վիճակը կ'ապա-
հովէ. և այս պաշտօնավարութեան ան-
կանոնութենէն ոչ միայն գլխագարու-
թիւն, այլ և ուրիշ կարգ մը հիւանդու-
թիւններ ևս կրնան ծագիլ: Եւ սակայն
աղիքներու ծուլութիւնը և չարնթացիկ
աղէպնդութիւնը յաճախ շատ մը անձե-
րու վրայ կը տեսնուին, որոնցմէ շատեր
անտարբեր կը դանուին զայն դարմանե-
լու, այլք այնպիսի դեղեր կը գործա-
ծեն, որ անմիջական ազդեցութենէ մը
վերջը կրկին հիւանդութիւնը անբուժելի
կը մնայ: Այս միջոցը կը նմանի բնու-
թեամբ ծոյլ ձի մը մտրակելու, որ հար-
ուածին ազդեցութեան տակ վայրկեան
մը քայլերը կը փութացնէ, և յետոյ իր
սովորական ընթացքը կը շարունակէ:
Կրնայի շատ մը լուծողական դեղեր

յանձնարարել թէ և, բայց ես ձեզի խոր-
հուրդ կուտամ որ, երբէք պարապ տեղը
աղէպնդութեան ոռաջքը առնելու հա-
մար, այս կամ այն յանձնարարուած դե-
ղերը չի գործածէք. որոնք ինչպէս ը-
սինք, ձիու մը տրուած մտրակի հար-
ուածին կը նմանին: Այս պարագային մէջ
պէտք է աւելի բնութեան դիմել, և
մեքենական միջոցներով բնական պաշտօ-
նավարութիւնը օճանել. Ահա այս մի-
ջոցներուն վրայ պիտի խօսիմ ձեզ, որ
միանգամայն առողջապահիկ և խնայո-
ղական են:

Ա. — Ընդհանրապէս առաւօտներն է
սր, մարդս իր աղիքները պարպելու
պէտքն կ'զգայ, ուստի առաւօտուն ար-
թընցած ատեննիդ, անկողնոյ մէջ, կամ
աւելի աղէկ անկողնէն ելլելով, գետինը՝
գորգին վրայ պառկեցէք. կամաց կամաց
երկու ոտքերնիդ մէկէն վեր բարձրա-
ցուցէք, մինչև որ իրաննուդ հետ ուղ-
ղանկիւն մը կազմեն. պահ մը կեցէք այդ
դիրքին մէջ, և երկար շունչ մ'առնելէ
վերջը, միևնոյն կերպով ոտքերնիդ կա-
մաց կամաց վար իջեցուցէք, և կրկին
երկար շունչ մ'առնելէդ վերջը, այս
անգամ առանց ոտքերնիդ շարժելու,
ձեռքերնիդ կուրծքերնուդ վրայ դրած,
իրաննիդ ուղղահայեաց կերպով վեր
բարձրացուցէք, մինչև որ կատարելա-
պէս նստած ձեւ մը առնէք. կրկին եր-
կար շունչ մ'առնելէ վերջ, կամաց կա-
մաց պառկեցէք, շունչ առէք, և ոտ-
քերնիդ վեր բարձրացուցէք. և այսպէս
շարունակաբար 5-6 անգամներ կրկնե-
ցէք այս գործողութիւնը. որ մարմնա-
մարզական մարձում (massage այսինքն՝ շը-
փում) մ'ըլլալով, աղիքներու բնական
շարժումները կը գրգռէ, և կղկղանաց
արտավանումը կը դիւրացնէ. եւ եթէ
աղէպնդութիւնը յօրինուածային ախտա-
ժէտութեան մը հետեւանքը չ'է, ան-
պատճառ այս միջոցը կը յաջողի, և իր
շարունակութիւնով, ժամանակ մը վերջը

աղէպնդութիւնը ինքնին կ'անհետանայ. Այս առթիւ եթէ գիշերները պառկած ատեննիդ գաւաթ մը տաք ջուր խմէք, որու մէջ դդալ մը առանց տղի թարմ կարագ հալեցուցած ըլլայ՝ մարծումի աղեցութիւնը աւելի շուտ և անպատիր կ'ըլլայ.

Բ. — Պզտիկ հասար կտաւէ տոպրակի մը մէջ կապարեայ մանր գնդակներ լեցնելով, բերանը կարելու է: Ամէն առաւօտ կամ երեկոյ, կռակի վրայ պառկելով, վերոյիշեալ տոպրակը փոքրնուդ վրայ գլտորցնելու է վերէն վար, վարէն վեր, աջէն ձախ, ձախէն աջ, և այսպէս շարունակաբար 5-10 վայրկեանի չափ, մերթ ընդ մերթ երկար շունչ մ'առնելով: Տոպրակին ծանրութիւնը պէտք է համեմատի ախտածեալին կարողութեանը հետ, որ կ'ըլլայ 1էն մինչև 3-4 քիլո:

Գ. — Մարծում. — Ախտածեալը կը պառկի աջ կողմի վրայ. երկրորդ մը ծունկի վրայ գալով, երկու ձեռքի բըթամատերով և ցուցամատերով կամաց կամաց վարէն դէպ ի վեր, ախտածեալին փորի մարմը վեր կը քաշէ չփելու պէս, միևնոյն ատեն, միւս մատներուն ծայրերովը հակառակ գործողութիւն մը կը կատարէ. այսինքն՝ երբ ցուցամատով ու բըթամատով մարմը բռնելով դէպ ի վեր կը քաշէ, մատները մարմին վրայէն ազատած պահուն, միւս մատներուն ծայրերովը դէպ ի վար կոխելով կամաց շրփում մը կը կատարէ. և որովհետև մատները մարմին մէջ մխած ատեն, կարելի չ'ըլլար վերէն վար շփել, մինչև ուր որ մատները հասնին, հոն կը կենայ. մատները կը քաշէ, և քիչ մը վարէն կրկին կ'սկսի, ամէն անգամուն ալ մատներուն ծայրերը աղիքներուն հասնելու են: Այս գործողութիւնը կատարելու է 4-5 անգամ, որ ի սկզբան բաւական ցաւառիթ է թէև, բայց հետզհետէ կարելի է վարժուիլ: Հինգ վայրկեան շարունակելէ յետոյ, ախտածեալը ձախ կուշտին վրայ

կը պառկի, և մարծումը կը կատարէ այս անգամ վերէն վար շփելով, կրկին 4-5 վայրկեանի չափ: Յետոյ հիւանդը կռակի վրայ կը պառկի, և մարծողը մատներուն ծայրով ամբողջ աղիքներու տարածութեան վրայ յաջորդաբար կը կոխէ. եթէ հիւանդը գէր է, այն ատեն փոխանակ մատներուն ծայրերով կոխելու. պէտք է բռունցնելով կատարէ այդ գործողութիւնը:

Բոլոր այս մարծումի գործողութիւնները պէտք է տեսն 15 վայրկեանի չափ, բաց այն ատեն միայն յաջողած կրնայ նկատուիլ, երբ գործողութիւնը աւարտելէ ու անմիջապէս վերջը աղիքները պարպելու պէտքը զգալի կ'ըլլայ:

ՄԱՔՅԻՄ

ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Մեզստաններու փառաւոր միջատները ոչնչացնել.

(Ե. 1-1-1-1. 7-1-1-25)

Դիւրին է արդէն հասկնալ թէ, այսպէս մշակուած ծառերու տրուելիք ինամները ո՞ր աստիճան դիւրին կ'ըլլան, և մեր երկրի դըրութեամբ իր կամքին թողուած ծառ մը երբ ինամել հարկ ըլլայ, ի՞նչ աստիճան դժուարութիւններու կը բաղխինք: Ասիկա բացատրելէս վերջը, անցնինք միջատներու և հիւանդութեանց առաջքը առնելու համար գործադրուած նախազգուշական միջոցները պարզելու:

Զմեռը՝ երբ արդէն ծառերը բուսակաշութեան մէջ չ'են, պէտք է խնամով մաքրել անոնց վրայ գտնուած մամուռները, և ճեղքերուն մէջի աղտոցութիւնները. որոյ մէջ կը գտնուին նաև միջատներ և ասոնց հունտերը. ինչպէս և հինգած, չորցած և բացուած կեղևները կտրել նետելու է: Այս գոր-

ծողութեան համար կը գործածեն կարծր խողանակներ, ինչպէս և մասնաւորապէս երկաթէ բարակ շղթաներով շինուած ձեռնոցներ. որոնցմով ուժով կը շփեն և կը քերեն ծառերու բունը և հաստը ոտները:

Այս գործողութենէն յետոյ վար թափած աղտեղութիւնները ժողուելով այրելու է, և կամ նոր մարած կրի փոշիի հետ խառնելով տեղ մը դիզելու է: Եթէ այս երկու միջոցներէն մին չգործադրէք, և անհոգութեամբ աղբանոց նետէք աղտեղութիւնները, միջատները նպաստաւոր տաքութեան մը մէջ միշտ կենդանի պիտի մնան. և այսպէս ձեր բոլոր աշխատութիւնները և ծախքերը ի դերս պիտի ելլան:

Երկրորդ՝ դեկտեմբերէն մինչ փետրուարի կէսը, յարմար և օդը բաց օրերու մէջ բոլոր միգատու ծառերը կրպատել (պատանա) իրենց ծաղկացումի կարգով. այսինքն կանուխ արթնցող ծառերը ամենէն առաջ, ուշ արթնցող ծառերը ամենէն վերջը:

Ահաւասիկ թէ ինչպէս կ'ընեն այս գործողութիւնը:

Տակառի մը մէջ կը պատրաստեն կաթի գոյնով թանձր կրաջուր մը, պարզ ջուրի մէջ մարած կիր խառնելով, որ երբ պատրաստ ըլլայ, կրպատի կարծրկէկ խողանակով մը կը ծեփեն ծառին վարի կողմէն սկսելով, կը վերջացնեն ճիւղերուն ծայրերը: Ուշագրութիւն ընելու է որ, միշտ խողանակը վարէն վեր քսուի, որպէս զի բողբոջելու մօտ գտնուող ճիւղերու սրտուկները չ'փնասուին: Ոմանք այս գործողութիւնը կ'կատարեն փոշեմաղ ջրացայտերով (թուրումպա, որու խողովակին ծայրը մասնաւոր շինուածքով մը ջուրը փոշիի պէս մաղելով կը ցայտեցնէ. ինչպէս են միլոուի համար գործածուած փոշեմաղ ձարձատիչները ևն.) այնպէս որ, կրաջուրը ուժ գնապէս ցայտելով, ծառին բոլոր ծակ ու ծուկերը կը ներմուծի: Բայց որովհետեւ կրաջուրը իր այս վիճակին մէջ թանձր ըլլալով, ձարձատիչին ծախէն դժուար դուրս կ'ելլէ, և երբեմն ալ ծակերը կը խցէ, ուստի մտածեցին կրաջուրին տեղ ուրիշ աւելի աղդու և լոյծ բաղադրութիւն մը գործածել:

Այս առթիւ ոմանք կը գործածեն երկաթի ծծմբատի ջրոյ մէջ լուծուածքը (կանաչ արջասպ *Sulfate de fer*). 100 քաշ ջուրի

մէջ 20 քաշ արջասպ լուծելով: Ուրիշներ կը գործածեն միլոուի համար յանձնարարուած բաղադրութիւններէն մին (Հանր. թիւ 14, երես 216 և շար.):

Ամենէն աղդուն հետեւեալ բաղադրութիւնը նկատուած է:

Խառնեցէք իրար 1 ու կէս քաշ մարած կիր, 1 քաշ սղնձի ծծմբատ (կէօղ թաշը), 5 քաշ ծխախոտի արտամուզ (այս վերջինին պատրաստութիւնը տես. Հանր. թիւ 10, երես 151) 25 քաշ ջուրի մէջ:

Այս բաղադրութիւնը կրնաք քսել ծառերուն վրայ կրպատի խողանակով մ'ալ: Պղնձի ծծմբատը կ'արգիլէ և կ'ոչնչացնէ մանրէսունկերը, որոնք այլ և այլ հիւանդութիւններ յառաջ կը բերեն. իսկ ծխախոտի արտամուզը որ մեծ քանակութեամբ կը մտնայ բաղադրութեան մէջ, կը սատկեցնէ բոլոր միջատները:

Ոմանք այս բաղադրութիւնով ծառերը ծածկելէ առաջ, կեղեւները մաքրելու ծամանակ, հետագայ բաղադրութիւններէն մէկը կը պատրաստեն, և ձեռքի կարծր խողանակը մէջը թափախելով, ուժով կը շփեն ծառերը, և ծծմբատի լուծուածքը մէկ-երկու օր յետոյ կը գործածեն: Ուրիշներ ալ նախ ծծմբատի բաղադրութիւնով կը պատեն ծառերը, և յետոյ միւս բաղադրութիւնները, որ ահաւասիկ:

Չորս քաշ եռացած ջուրի մէջ հալեցուցէք 190 տրամ Արարիկ օճառ (արապ սապօնը). խառնուրդը տակաւին չի պաղած, աւելցուցէք վրան 8 քաշ քարիւղ, և ուժով խառնեցէք մինչև որ քիչ մը սաղի. լեցուցէք այս խառնուրդին վրայ 90 քաշ ջուր շարունակ խառնելով: Բաղադրութիւնը պատրաստ կ'ըլլայ, և վերը յիշուած եղանակով կը քսէք ծառերուն վրայ: Մերթ ընդ մերթ փայտով մը պէտք է խառնել բաղադրութիւնը, որովհետեւ քարիւղը զատուելով, երեսը կ'ելլայ: Չի մոռնանք ըսելու թէ, այս բաղադրութիւնը ձարձատիչ գործիներով ալ կարելի է գործածել: (Տես միւս բաղադրութիւնները Հանր. թիւ 10)

Փետրվարի վերջերը պէտք է խնամով մաքրել միգաստանը. այսինքն՝ ծառերուն տակը ինկած ճիւղի, տերեւի, յարդի, ևն. դէպերը, որոնք դրուած են դիտմամբ, կամ

ձգուած կ'ըլլան անհոգութեամբ, ժողովել
այրեւել է: Որովհետեւ՝ կարգ մը միջատներ
ձմեռուան ամբողջ եղանակը այդ դէպերուն
մէջ պահուածութեամբ կ'անցունեն: Մայիս ամ-
սոյ մէջ, իւրաքանչիւր ծառի տակը դրէք
խոտի, ճիւղերու եւ. փոքրիկ դէպեր, մի-
ջատները իրենց տրամադրութեան տակ
պատրաստ պատասպարան գտնելով, անոնց
մէջ պիտի ապաստանին, և ինչպէս վերը ը-
սինք, յետոյ ժողովելով այրեւել է:

Պատենաթեկերը ոչնչացնելու համար
յանձնարարուած միջոցները ճշգրտորէն գոր-
ծողութիւն. այսինքն՝ ծառերուն վրայ անոնցմէ
տեսնելուդ պէս. տակերին սաւան տարա-
ծելով, ծառերը ցնցել և թոթուել ինկած
միջատները ժողովելով այրել, ինչպէս և սե-
րած, թողած ծաղիկ կոկոնները և նորա-
կապ պտուղները:

(Հարգելի է)

Հ. ԲՈԼՍ

ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԷՆ

Նոր կարգադրութեանց պատճառաւ,
տպարանի փոփոխութեան հետ, պար-
տաւորած եւ խմբագրութեանս գրա-
սենեակը փոխադրել առայժմ Սօպահի
Բարսեղ էֆ. Ղազարոսեանի վաճառա-
տան վրայի յարկը. ուստի՝ կը խնդրուի
թերթիս հետ առնչութիւն ունեցող ա-
մեն անձերէ (գործակալ, բաժանորդ,
եւ.) որ բարեհաճին իրենց թղթակցու-
թիւնները ուղղել հետեւեալ հասցէին,
ԱՌԱՆՑ ՈՒՐԻՇ ՈՒ ԵՒ Է ՄԻՋՆՈՐԴԻ.
հակառակ պարագային, եթէ անպատե-
հութիւններ տեղի ունենան, ամեն գա-
նաւ անլսելի մնալով, պատասխանատու
չենք ըլլար:

درعليه ده باچه قوشنده اسكى ضبطيه ده

صوباجى پارسخ افدينك ۱۹ نومروى
دكاننده (مجموعه علوم) غزوة سى سر محررى
(پولاد) افدى يه

Ղ. Բոլաս Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»

Շնորհիւ Բարսեղ էֆ. Ղազարոսեանի
19. Էսկի-Զապթիյէ, Պաղչէ-Գալու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"

Chez M. Parsegh Hazarossian

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ԱՌՏԵՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԱՂԸ ԵՒ ԻՒՐ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աղը՝ որ մեր ամենօրեայ անունդնե-
րու մէջ կը գտնուի, և առանց անոր
մարդս գրելէ չի կրնար ապրիլ, և մեզ
չստ մը միջոցներէ կ'ազատէ, միևնոյն
անգամ դեղ մ'է կարգ մը հիւանդու-
թիւններու. զորօրինակ, երբեմն կը պա-
տահի որ մէկը ընդհարումէ մը, կամ
գետինը իյնալով գլուխը կամ ո ե է
տեղ մը կը ցաւի կամ կը ֆնասուի, և
այդ պատճառաւ կը մօրի, և կրնայ ըլ-
լալ որ, մօտերը դեղարան չի գտնուի.
այդ պարագային, աղ ջուրի մէջ լաթ
մը թաթխելով ցաւած տեղը պէտք է
դնել՝ յաճախ փոխելով, որ քիչ ժամա-
նակէն կ'սթափեցնէ:

Նոյնպէս եթէ գաղջ (ըլլը) ջուրի մէջ

քիչ մը աղ դնէք, լաւ փսխեցուցիչ դեղ մը կ'ունենաք:

Եթէ գաւաթ մը պաղ ջուրի մէջ, սուրճի դեղ մը աղ դնէք, ընտիր մարսողական մ'առած կ'ըլլաք. որ թէ խիթը (սանճը) կը թեթեւցնէ (եթէ ունիք) և թէ մարսողութիւնը կը դիւրացնէ:

Աղը՝ աչքերու յոգնութիւնը կ'առնէ. պէտք է սակայն տաք աղ ջրով լուալ, որ լաւագոյն միջոցն է:

Մաղերու թափելը կ'արգելէ, երբ մերթ ընդ մերթ աղ ջրով լուաք գլուխիդ: Եթէ աղ ջրով լոգանք մ'առնէք՝ ծովու բաղնիքի կը հաւասարի, որ խիստ կազդուրիչ է (անշուշտ ծովէ հեռու գտնուողներու համար է):

Սւլեղէ առաջ աղ ցանեցէք կոսպերուներու վրայ, և պիտի տեսնէք թէ, փոշի պիտի չեխնէ, և դոյներն ալ պիտի պայծառանան:

Եթէ կրակի վրայ կերակուր եփէք և հոտը տարածուած ըլլայ, այդ առթիւ պտուղնոց մը աղ նետեցէք կրակին մէջ, որ խիւղի անախտութեամբ հոտը կ'անյայտացնէ:

Միտը կասկարած (ըսկարա) ատեննիդ եթէ կրակը խաւարի, քիչ մը աղ նետեցէք կրակին մէջ, անմիջապէս կ'արծարծի. թէ և քիչ մը կը ճարճատի (չաթրամար):

Աղը՝ կարմիր գինիի արտադր կը մաքրէ, երբ դեռ նոր է. ցանեցէք վրան, և յետոյ պաղ ջրով լուացէք:

Յարդէ շինուած գլխարկները և փռիթները (խսիր) աղ ջրով սրբեցէք, այնքան լաւ կը մաքրուին որ նոր կը դառնան:

ԼԵՄՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Ինչպէ՞ս պահելու է որ չի մգլտին:

Այո մասին Սիանդիֆիք Ամեռիքէն անուն թերթը հետեւեալը կը յանձնարարէ: Պաղ ջուրի մէջ 2 կտոր ածուխ դը-

նելով՝ լիմոնները մէջը ձգեցէք. և ամեն շաբթու ջուրը փոխեցէք. այս կերպով լիմոնները թէ կը հասունանան և թէ հիւթեղ կ'ըլլան, և քանի մը ամիս կը դիմանան:

ԱՐԱՔՍ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— Տոքթ. Խորասանճեան էֆ. Աղգ. Հիւանդանոցը կատարած քննական պրոպոյսին մէջ հետեւեալ էական դիտողութիւնները ըրեր է. նախ հիւանդանոցին մէջ պատուարուած սրբերը տեղափոխել, որոնք կը խամրին այդ մթնոլորտին մէջ, երկրորդ՝ յիմարները դեանտալարկի խուցերէն վերի բալկոնայ սրահները հանել. նոյնպէս մատնանիչ ըրած է պատարկութեան և մաքրութեան պահանջներ. նաև դիտել տուած է թէ ջուրի զգալի պակաս կայ հիւանդանոցին մէջ, որով հիւանդները զուրկ կը մնան լոգանքէ:

— Կայս. Իրատէով Աղգ. հիւանդանոցի օրական պարէնը եզոյ 51 օխա միտը 150ի բարձրացուցուած է և 340 օխա հասցը 600ի. պէտք եղած յանձնարարութիւնները եղան Բ. Դրան:

Կիրակի օր Ս. Պատրիարք հայրը պատարագ մատուց Աղգ. Հիւանդանոցի մատուռին մէջ և այս առթիւ քարոզ խօսելով Կայս. նոր նպատակին համար բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանին արեւատութեան համար: Ներկայ էին Ժողովներու, խորհուրդներու անդամները, եկեղեցականներ ու հայ անձնաւորութիւններ: Յ. Սթամպոլլուեան էֆ. յանուն հոգաբարձութեան թուրքերէն ճառ մը խօսեցաւ. նոյնպէս որբա-

նոցի ուսուցիչներէն մին երախտագիտական ուղերձ մը կարդաց: Հանդանոսկութեան ձեռնարկուելով բաւական արգիւնք գոյացաւ: Հանդէսէն յետոյ Ս. Պատրիարք հայրը Ա. գործակաւար Տ. Ներսէսեան էֆ.ի ընկերակցութեամբ կայս. պալատ գնաց:

— Շուշիի մէջ մեռնող ազգային մը 1000 բուլղի կտակեր է Գէորգեան ճեմարանին և նոյնքան դումար մը՝ Շուշիի թեմական դպրոցին, 2000 բուլղի ապաստանարան մը հիմնելու, 500 բ. բարեգործ. ընկերութեան:

— Միքայէլ էֆ. Յակոբեան տակէ տալ Հիւանդանոցի վերաշինութեան համար 25,000 տակի հանգանակած էր, ուրկէ իր քովը 2500 տակի մնացած էր, զոր հիմա պիտի գործածուի հիւրանոց, դեղարան, տեսչարան շինելու: Յակոբեան էֆ. հիւանդանոցի մատուռը իր ժախքով շինել պիտի տայ:

— Բաղէշի Հայ բանտարկեալները թուով 55՝ կայս. իրաւէով աղատ արձակուեցան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վեհ. Սուլթանի զահակաւութեան տարեգարձին առթիւ կայս. հրամանով 270,000 զրշ. տրուեցաւ մէտրէսէներուն:

— Բաթանայի (Խապիս) Օսմ. հիւպատոս անուանուեցաւ Բ. Դրան օտար թղթակցութեանց դիւանին քարտուղար Մաթակեան էֆ.:

— Խապիոյ զեռպան Պ. Բանտս մայրօքաղաքս հասաւ: Տեղափոխման լուրերը կը հերբուին:

— Իրէքի կուսին գաւառակին մէջ մեծ հրդեհ մը պատահելով 208 խանութ, 2 խան, 12 տուն և մզկիթ մը այրեր են:

— Պէտլիւք-աւերէի հրկիզեալներուն համար նպաստամատոյց յանձնաժողով մը կազմուեցաւ Ռուս դեսպանին նախագահութեամբ և արդէն սկսած է նըպաստներ հաւաքել, որոնք ամէն կողմէ կը հասնին: Վեհ. Սուլթանը 400 տակի նուիրեց հրկիզեալներուն: Ապահովագր. ընկերութիւնները 20,000 տակի վնաս ունին:

— կայս. իրաւէ մը կը հրամայէ քսան թուրք ալաներ խրկել Գերմանիա ըսնակին մէջ ծառայելու համար:

— Պեա. խորհուրդը որոշեց որ վըկայական չունեցող գայմազամները քըննութիւն տան և այսուհետեւ Միքիյէէն շրջանաւարտ եղբայրները միայն գայմազամ պիտի կրնան ըլլալ:

— Պուլկարիոյ իշխանը Բալթիկէն ալ, պատանշանին մեծ ժապաւէնը նուիրեց Բերայի տառիկան-զինուորներու հրամանատար ֆաիդ փաշայի: Նոյնպէս Գարատաղի իշխանը Տանիլօ պատանշանին մեծ ժապաւէնը նուիրեց Գոսովայի կուսակալին:

— Պաշտօնական զեկոյց մը կըսէ թէ, Օրէնքին խիստ արամադրութիւնները ի գործ պիտի դրուին այն ամեն արապգրիչներուն գրաժաճառներուն ու հեղինակներուն նկատմամբ, որոնք առանց Մէարիֆի արտօնութեան գիրք, տետրակ կը տպեն, կը ցրուեն կամ կը ծախեն:

— Վեհ. Սուլթանը ներում շնորհեց Բումէլիի նահանգներէն 40 հոգիի, որոնք գատապարտութիւն կրած էին:

— Արևելեան երկաթուղիի կառաւարտներուն մէջ պաշտօնեայ մը պիտի գտնուի անցագիրները քննելու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սպանիա և Միացեալ-Նահանգները : — Հաշտութեան դաշնագրին կնքման համար կազմուած յանձնաժողովը Բարիդ պիտի գումարի . անդամները ընտրուած են ամբողջովին : Փիլիպեաններուն խնդիրը վարանումի մէջ ձգած է ամէն կուսակցութիւն . հանրապետականները գաղթավայրերու ընդարձակման կուսակից են , իսկ ռամկավարականները հակառակ են փիլիպեաններու դրաւման . Պ . Մաք-Քինլի ալ չուզեր գրաւել Արչիպելագոսը , բայց Մանիլայով չի գահանար : Քուպայի , Անթիլեանց նաւահանգիստները բաց են ամէն ազգի տէրութեանց նաւերուն առջև : Ամերիկայի մէջ մեծ գրգռում կայ Պատերազմ , նախարարին դէմ , որ յոռի մատակարարութիւն մը ի դորձ դրած է , որով բանակը կը նեղուի : Սէրվէրա ծովակալը և գերի սպայներ ազատ արձակուեցան :

Ձէնընկեցութիւնը . — Ձէնընկեցութեան առաջարկը լաւ ընդունելութիւն գտած է ամեն տէրութեանց կողմէ , սակայն քիչ մը անդորձադրելի կը ներկատուի մանաւանդ . ներկայ պարագաներուն մէջ . Կ'ըսուի թէ Երրեակ նիզակակցութիւնը ուժ պիտի տայ Չարին առաջարկին : Փրանսայի մէջ մամուլը ջերմ հակառակութիւն ցոյց կուտայ , հաշտելով որ Ալլամ-Լօռէնի խնդիրը շուրջ պիտի իյնայ բոլորովին՝ զէնընկեցութեամբ : Անգլ . կառավարութիւնը իր համակրութիւնը յայտնեց զէնընկեցութեան դադափարին նկատմամբ , բայց միւս կողմէ կը կարծուի թէ Չարը այդ առաջարկով նպատակ ունի ծայրագոյն Արևելքի , Փիլիպեանց խնդիրները կարգադրել վերջնապէս : Չարը և Չարուն հին Սևաստաբօլ գացին , ուր լաւ ընդունելութիւն գտան :

Փրանսա . — Տրէյֆիւսի խնդիրը նո-

րէն սկսաւ յուզուիլ և այս անգամ աւերի բուռն կերպով . պատերազմ . դիւանին տնօրէն Հանրի հարցաքննուելով խոտովանեցաւ թէ համբաւաւոր նամակը զոր Տրէյֆիւսի դէմ իբր վէնք կը դորձածէին կեղծ է և ինք պատրաստած է , այս յայտարարութեան վրայ Հանրի բանտարկուեցաւ , բանտին մէջ ածելիով կոկորդը կտրելով անձնապան եղաւ : Պատերազմ . նախարար Պ . Բաւանեաք որ սկիզբէն արդէն հակառակ էր դատին վերաքննութեան , հրաժարական տուաւ Հանրի խոտովանութեան հետեանքով , միանգամայն յայտարարելով թէ ինք համազուած է Տրէյֆիւսի յանցապարտութեան : Պ . Պուատէֆր ալ հրաժարեցաւ և անոր յաջորդեց Պ . Ռընուառ : Նախարարները , մամուլը և ժողովուրդը դատին վերաքննութեան կուսակից են . մեծ իրարանցում կայ Բարիդի մէջ . ցոյցեր տեղի կ'ունենան . հակառէյֆիւսեան թերթերն ալ պապանձած՝ վերաքննութիւն կը պահանջեն : Տիկին Տրէյֆիւս աղերսազիր տուաւ դատը վերաքննելու : Պատերազմական նախարար անուանուեցաւ Բարիդի կառավարիչ Պ . Ջիւրլէնտէն : Այս ամէնուն մէջ դիւանագիտական խաղեր կան կը կարծուի :

Անգլեզիպտական յողթութիւն . — Օմաուրմանի Սուտանցի զօրքերը Քիչնըր փաշայի բանակին վրայ յարձակելով ծանր կորուստով ետ մղուեցան : Շարաթօրը Քիչնըր փաշայի բանակը Օմաուրմանի վրայ յարձակելով առաւ . Սուտանցիները փախան , Եգիպ . զօրքը Շէյխը հալածեց : Սուտանցիները քանի մը հազար հոգիի կորուստ ունեցան :

ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

Տխմարին մէկը պաղպաղակ ծախսողին խանութը մանեւթով պաղպաղակ կ'ապրուպըրէ,

Պաղպաղակ ծախողը. — 'Նհա՛՛ ձեզի պատուական պաղպաղակ :

Տխմարը. — 'Բայց պաղպաղակը թարմ և պաղ ըլլալու է » : Այս խօսքին վրայ պաղպաղակ ծախողը սալշահար յաճախողին երեւոյր կը նայի :

Պարոն մը. — Ի՞նչու գրպանս խառնեցիք :

Քաակահատը. — Ներեցէք, տէ՛ր ձեր վերարկուին դոյնը խմինիս շատ կը նըմանէր :

Անդղիացի մը քրտնոտ ճամբարդած պահուն, պանդոկի մը օթեւանեւթով պանդակապետը կանչելով կ'ըսէ.

— Անկողնի կաղմածը կատարեալ է այնպէս չէ՞ :

Պանդակապետը. — Ամբողջ է, անկողին, վերմակ, բարձ, լումբար և ջուր :

Անդղիացին. — Ե՛է՛ս (այս)՝ աստիճանը ամենքը աղէկ, բայց միւսկները ոչնչացնելու վտռի չ'կայ :

Երիտասարդ մը տարեգլխի առթիւ իր նշանածին մատնի մը նուիրած ատեն կ'ըսէ. « Զ. շիտակ ըսէ այս մատնին ի՞նչ պէս գտար » :

Աղջիկը կը պատասխանէ. « Մ'ինչև հիմա ինձի նուիրուած մատնիներուն մէջ ամենէն հիանալին է » : Այս խօսքին վրայ երիտասարդը զարմացած կը մնայ :

Ակումբի մը մէջ կենդանիներու վրայ խօսուած պահուն հոն գտնուողներէն մին դաշնակի սիրահար անձի մը սա հարցումը կ'ուղղէ.

— Աստուած ի՞նչու համար փրկեալուն աղաները այնքան երկայն ըրած է :

Դաշնակի սիրահարը. — Դաշնակին մատերը շինելու համար անկէ :

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԺԲ.

Որո՞նք են քանդակահան յառաջատու-թեան մը երեք եզրերն՝ որոց գումարն է 126, և վերջին եզրը առաջին եզրէն 90 աւելի է :

Տ. ՊՕՋԱՃԵՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՄԻԱՄՏՈՐԷՆ ԲԱՅԱՏՐՈՒԱՅ

Գինեմոլ — Աղջիկ ամուսնացնել ուզող մարդ համար սոսկալի բան :

Գինի — Օղիին դործը տեսնելուն համար, խել մը օրիորդներ կարեւորութիւն տուած են :

Գիշեր — Վարագոյր մը՝ ոչ ու տակ գիւղա-գնացութեան հաճոյքներ կը ծածկուին :

Գիտութիւն — Աղգային վարժարաններէ վերցուած է, պիւտճէն խանդարուած ըլլալուն :

Գիտուն — Մաքուր Հայերէն խօսող :

Գիրի — Մանկութենէ սրբել վարժուած ըլլալով մարդ, ամբողջ կեանքին մէջ չը կրնար մոռնալ վայն :

Գիւղ — Կանանց և օրիորդաց հաճոյակա-տարը :

Գծագրութիւն — Ընդօրինակութիւն պատ-կերաց :

Գնդաւակ — Շրջագգեստներուն պակասու-թիւնը ծածկող գործիք :

Գողնաց — Տակուին որոշուած չ'է թէ տան-տիկիները պիտի դոյժածեն թէ սպասուհիները :

Գոհ — Եթէ կը սիրես մէկը և կը սիրուիս
փոխադարձ :
Գողութիւն — Իւրացուցածդ եթէ երևան
եղնէ :
Գովեստ — Իմա՛ գողտնի առնչութիւն :
Գործադրելի — Ուսումնական խորհրդոյ ու-
րոշումները :
Գործունեայ — Ամէն օր պաշտօնին գլուխը
գտնուող, հոգ չէ թէ գործ մը տե-
սած չըլլայ :
Գրարաւ — Անհատականաւ ըստ :
Գրադէտ — Ձեռք կուտայ որ երկու տող
բան կարենաւ գրել :
Գրադիր — Պատրիարքարանին մէջ գտա :
Գրահաշիւ — Մասնաւոր վարձարանները
բարձրաց ելու նպատակաւ Ազգ.
կրթական ծրագրէն դուրս ձգուած
է :
Գրասենեակ — Մէկ սեղան և երկու աթո-
ռով տեղ մը, ուր ամիսը անգամ
մը նամակ կը գրուի :
Գրկել — Բօլքա խաղալ :

—> ԵՄԻ ԿՆԵՆԻ —

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Նիկոմիդիա. — Ա. Կ. Կոստանեան. —
Եթէ տակաւին չէք ստացած թիւ 22ը, իս-
կոյն խնայուցէք : — Թերթերը ուշ չըրկուե-
լուն պատճառը, տպագրական անկարգու-
թեանց հետեանքն եղած է. կը շտկուի այ-
սուհետէ :
Ատաբաղար. — Ս. Գ. Մախրիշեան. —
Նոր բաժանորդները արձանագրած ենք : Ինչ
տեսակ ներկ գործածելը, և ինչ կերպով
ներկելը գրեցէք, որպէսզի անոնց ազէկ կամ
գէշ կողմերը երևան հանելով պատշաճը
գրուի մեր կողմէ : Նոյնպէս խնայուցէք մեզ
թէ, աւելի որ գոյներուն վրայ կ'ուզէք ան-
միջական տեղեկութիւններ տալու :
Մանիսա. — Գ. Շահինեան. — Շնոր-
հակալութիւն ձեր ջանքերուն. պակաս թի-
ւերնիդ կ'ստանաք այս անգամ. տարակոյս
չիկայ որ, դուք ալ մեր նախորդ գործակա-
նար Վարապետ Բիւքէճեանի «զապրի և
նենգամիտ» խարդախութեանց զոհ գացած էք
Մանուսայագործութեան վրայ կատարած
ուսումնասիրութիւննիդ գովելի միանգամայն
նշանակութեան արժանի է. երբ աշխատու-
միրութիւննիդ զրկէք, մենք ալ հաճութեամբ
պիտի գրենք ներկարարութեան մասին : Մեր
նպատակը այդէն ժողովուրդին օգտակար
նիւթերու վրայ գրել է, բայց դժբաղդարար

ցարդ մեր ընթերցողները չի կրնալով բոլորա-
նել զայս, շատերու կողմէ մեզ կը զրկուին
նորավէպերու թարգմանութիւններ, աւան-
դավէպեր ևն, որոնք մեր ուղղութիւնն
դուրս են : Երանի թէ ամեն գուտաւի մէջ
ալ մեր ընթերցողները Ձեզ նման պարապէին
իրենց տեղւոյն տնտեսական կեանքով, ուր-
կէ անշուշտ աւելի պիտի կրնան օգտուի
քան միւս վերացական ճիւղերէն :

Մանիսայոց ներկարարութեան վրայ դը-
րած ատեննիդ, պէտք է լիջել անպատճառ
իրենց գործածած միջոցները, որպէսզի անյա-
շտութեան պատճառները կարելի ըլլայ մատ-
չանիլ ընել. և որովհետեւ շատ կարելի է որ,
իրենց ընտրած դրութիւնը շատ լաւ կրնայ
ըլլալ, բայց չափերու, գործադրութեան և
կամ պատրաստութեան և գանակներու մէջ պա-
կատ կամ սխալ միջոցներ գործադրելուն
չեն յաջողիր :

Ըստ Ձեր փախաքանաց պիտի ջանամ
թերթիս մէջ ներկարարութեան դասընթաց
մը հաստատել մօտերս : Շերտմարտութեան
պէս, որչափ որ թերթիս ծաւալը ներէ,
Մենք նպատակ ունենինք թէ եւ այս երկրորդ
վիցամսէն սկսեալ թերթիս ծաւալը ընդոր-
ձակել էջերը շատցնելով, որպէսզի՛ ըստ կա-
րելոյն շատ նիւթերու վրայ գրենք, և մեր
ընթերցողաց ամեն հարցմանց պատասխանե-
լով դոհացնել զիրենք, բայց դժբաղդարար
ժողովուրդէն լպասուած քաջալերութիւնը
չի գտանք :

Մանիսա. — Գ. Կ. Ունեան. — Եթէ
չէք ստացած պակասները հաճեցէք խօսիյն
խնայնել :

Այստեղ. — Օր. 2. Եղերճեան. — Հա-
ճեցէք խնայնել մեզ, եթէ տակաւին չէք ստ-
ացած պակաս թերթերնիդ, որ խօսիյն զրո-
կուի. պատճառը կրնաք հասկնալ ներկայ
թղթակցութեանց շարքին մէջ : — Բաժնե-
դինը շատոնց զրկած ըլլանիդ կ'իմացնէք,
ուր, կամ որու միջոցաւ, նամակնուդ մէջ
չէք պարզած :

ԾԱՆՈԹ. — Նախորդ 25-րդ թիւին Մա-
լաքեան էֆ. Իյօղուածին վերջը «ցաւով»
բառը պէտք է «յուսով» կարդալ

Վճարող Բաժանորդաց հասցեները պիտի սպեւն ԳՕՏԻՆԵ-
րուն վրայ. ուստի հաճեցե՛ք Ձեր բաժնեգիրը կանխիկ դրկել,
եւ հասցեների ձշդիւ ինացնել մեզ:

ՈՒՇԱԴՐ ՈՒԹԻՒՆ

Մեզ բաժնեգիր կամ քերթի
գիր պարտք ունեցողներէն Ա-
ՆՈՒՆՈՎ, պիտի պահանջենք եւ
եւ միշտ պիտի պահանջենք, եթե
մօտեւ չ'ստանանք մեր բաժա-
նորդներէն:

ՄԵՐ ԹԵՐԹԸ ՍՏԱՑՈՂՆԵՐՈՒՆ

Յարդ մէկ որշ. չե՛ք վճարած:
Բաժնեգիրն կանխիկ դրկեցե՛ք
եւ կամ ստացած ամբողջ քեր-
թերը մեզ վերադարձուցե՛ք:

Ա.Ռ. ԲԱԺԱՆՈՐԴԱ

Հաճեցե՛ք յառաջիկայ վեցամսեան կանխիկ դրկել:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնքապ — Գարեգին էֆ. Պողարեան
Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիւր — Յ. Պ. էֆ. Մանուէլեան
Գուրս-Պէլէն Արթ. Տ. Ստեփան քահանայ
Մկրեան
Գահիրէ — Մ. Պ. էֆ. Ս. Նաթանեան
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կտաճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէլիշեան

Կելիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Կիրասուն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արթ. Տ. Յովհաննէս հանա յա-
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Մուշ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան
Պանսրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Պարսիզակ. — Վահան էֆ. Ճիկունի
Պրուսա. — Օննիկ էֆ. Լութֆեան
Սամսոն. — Կարապետ էֆ. Սէֆէրեան
Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պողոս էֆ. Ազնաւորեանի խանութը:
Դատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը:
Բերա, Մեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: